Արձանագրություն N 2

«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 04 հոկտեմբերի 2017թ. ժ. 09:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Միրզոյան, Ռ.Մուրադյան, Ս.Հասրաթյան, Ա.Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Փանոյան

Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Անվանումը	Հասցե
1	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ	Ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
2	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.
-չի համապատասխանում <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ Հավելված 10-ով նախատեսված հայտի ապահովման մեջ խախտվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 12-րդ կետի հետևյալ դրույթը.

-տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող

փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

-Անհամապատասխանություն կա նաև հայտի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման և Հավելված 10-ի ժամկետների միջև:

Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

-չի համապատասխանում <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

4. Մասնակցի կողմից առաջարկված գները հետևյալն են.

N	Չափաբաժնի անվանումը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	
		<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ
1	2	3	4
1	Սկաներ 1	**8300000**	4623500
2	Սկաներ 2	**5936000**	-

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Ընդունել ի գիտություն, որ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ է զբաղեցրել հետևյալ մասնակիցը՝

-առաջին չափաբաժնի մասով՝ <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ն,

-երկրորդ չափաբաժնի մասով՝ <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն գնային առաջարկների բացման նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահատման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի՝
Նախագահ՝ _____ Հ.Հովհաննիսյան
Անդամներ՝ _____ Լ.Միրզոյան
_____ Ռ.Մուրադյան
_____ Ա. Հայրապետյան
_____ Ս. Հասրաթյան
Քարտուղար՝ _____ Լ.Փանոյան